# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Կոտայքի մարզ(Հրազդան)

***«Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի համար գետավազանային կառավարման պլան»-ի նախագծի և վերջինիս՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվության հանրային լսումների***

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք ՀՕ-150-Ն, խմբ. 3.05.24թ.) և ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ 2025թ. հուլիսի 11-ին ժամը 14:00-ին՝ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում՝ մարզպետարանի շենքում տեղի է ունեցել «Ի Սի Ի Քաուքազուս» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված «Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի համար գետավազանային կառավարման պլան»-ի նախագծի և վերջինիս՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվության վերաբերյալ 2-րդ հանրային լսումը: Հանդիպմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի, նախաձեռնող կողմի, մարզպետարանի աշխատակիցները, Գառնի, Գողթ, Գեղարդ բնակավայրերի վրչական ղեկավարները և աշխատակիցները, բնակիչները:

Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ **Հ. Ֆրունզիկյանը** ողջունեց ներկաներին, ներկայացավ և խնդրեց ներկաներին ներկայանալ:

**Հ. Ֆրունզիկյանը** ներկայացրեց հանդիպման նպատակը, այնուհետև հայտնեց, որ Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի «Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի համար գետավազանային կառավարման պլան»-ի նախագիծը դասակարգվում է որպես հիմնադրութային փաստաթուղթ և ենթակա է փորձաքննության: Փաստաթղթի ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությունը ուղղարկվել է տարբեր նախարարություններ և շրջակա միջավայրի մասնագիտական ստորաբաժանումներ որոնք իրենց առաջարկություններն ու դիտողություններն են ներկայացրել, փորձագետի կողմից փորձաքքնվել է և ուղղարկվել է լրամշակման, որը լրամշակվել է նախաձեռնողի կողմից: Այնուհետև ներկայացրեց տվյալ փաստաթղթով սահմանված միջոցառումները: Ներկայացնելուց հետո խոսքը փոխանցեց նախաձեռնող կողմի ներկայացուցչին և խնդրեց մանրամասն ներկայացնի նախատեսվող գործունեությունը:

**Մ. Ոսկանյանը** ներկայացրեց «Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի համար գետավազանային կառավարման պլան»-ում ընդգրկված շրջակա միջավայրի վրա հիմնական ճնշումները և դրանց ազդեցությունը նվազեցնող նախատեսվող միջոցառումների շրջանակը: Նշվեց, որ Կառավարման պլանի նպատակներից են. 1) հավասարակշռել տարբեր ոլորտների ջրօգտագործողների և շրջակա միջավայրի փոխկապակցված հարաբերությունները, 2) պահպանել մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսները, 3) բարելավել տարանջատված ջրային մարմինների որակական և քանակական կարգավիճակները, 4) կանխարգելել տարանջատված ջրային մարմինների հետագա վատթարացումը, 5) աջակցել ջրային ռեսուրսների կառավարմամբ զբաղվող մարմիններին, քաղաքականության մշակողներին և հանրությանը՝ ջրային ռեսուրսների ոլորտում կայացման գործում: Մ. Ոսկանյանը ներկաներին հորդորեց ներկայացնել իրենց առաջարկությունները, քանի որ հենց իրենք են հանդիսանում տվյալ փաստաթղթի հիմնական շահառուներ: Այնուհետև խոսքը փոխանցվեց կառավարման պլանի մշակող թիմի ներկայացուցչին:

**Վ. Քառյանը** ներկայացրեց կառավարման պլանի մշակման նախադրյալները և ինստիտուցիոնալ շրջանակները: Համառոտ ներկայացրեց ԿՊ-ի բովանդակությունը և ավելի մանրամասն՝ Կոտայքի մարզի համար նախատեսվող միջոցառումները, որոնք կնպաստեն խնդիրների լուծմանը, ինչպես նաև ջրի որակի անմիջական բարձրացմանն ուղղված՝ մասնավորապես կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման միջոցով, ջրամբարաշինության և աղբահանության կազմակերպման միջոցով:

**Հ. Ֆրունզիկյանը** հորդորեց ներկաներին լինել ակտիվ և տրամադրել իրենց տարածաշրջանին վերաբերող առաջարկություններ, որոնք հնարավորինս լինեն տեխնիկատնտեսապես հիմնավորված: Ֆրունզիկյանը նշեց, որ կառավարման պլանում նախատեսված միջոցառումները, փաստաթղթի՝ կառավարության կողմից հաստատվելուց հետո, պետք է անցնեն տեխնիկատնտեսական ուսումնասիրություն, այնուհետև որոշվեն ֆինանսավորման աղբյուրները, որից հետո կարող են հայտարարվել համապատասխան մրցույթներ:

**Գառնի** համայնքի ներկայացուցիչները ներկայացրեցին իրանց կողմից անհրաժեշտ բոլոր միջոցառումները և ասացին լրացուցիչ գրավոր կներկայացվի:

**Հ. Ֆրունզիկյանը** ևս մեկ անգամ առաջարկեց, որ լրամշակված հաշվետվությունը նորից կուղարկվի մարզպետարան՝ կարծիքի, որպեսզի մարզպետարանը ներկայացնի իր առաջարկությունները:

**Մարզպետարանի** ներկայացուցիչը առաջարկեց համայնքների ղեկավարներին մեկ շաբաթյա ընթացքում կրկին ուսումնասիրել փաստաթուղթը և ներկայացնել առաջարկություններ:

Ծավալվեց ընդհանուր քննարկում հիմնական խնդիրների շուրջ՝ ջրամբարների կառուցման հարցերը, մաքրման կայանների կառուցման տեղերը, միջոցառումների իրականացման համար ֆինանսների հայթհայթման խնդիրները:

**Հ. Ֆրունզիկյանը** նշեց, որ աղբահանության կազմակերպումը ամենակարևոր միջոցառումներից է, քանի որ աղբը հանդիսանում է ջրի որակի վրա հիմնական ճնշում գործադրող հանգամանքներից: Խոսվեց նաև մաքրման կայանների մասին, որոնք պետք է մաքսիմալ չափով ընդգրկեն հնարավորինս շատ համայնքներ:

Այլ հարցեր չհնչեցին **Հ. Ֆրունզիկյանը** շնորհակալություն հայտնեց ներկաներին և ամփոփեց հանդիպումը:

Հանրային լսումների վարող՝

«ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Հ.Ֆրունզիկյան

«Ի ՍԻ Ի Քաուքազուս» ՍՊԸ-ի տնօրեն/ներկայացուցիչ՝

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը: